ՀՏԴ -591.5

ԼՂՀ ԿԱԹՆԱՍՈՒՆՆԵՐԻ ՖԱՈՒՆԱՆ ԵՎ ՆՐԱ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ա.Բ. Ադամյան, Ս.Ա Ադամյան
կենսաբանության ամբիոն

Յուրաքանչյուր պետության եւ ժողովրդի համար պատմական եւ մշակութային արժեքների՝ հուշարձանների ու բնական հարստությունների, այդ թվում կենդանական եւ բուսական աշխարհի պահպանությունն ու հաջորդ սերնդին փոխանցելը համարվում է առաջնակարգ ազգամարտական խնդիր: Հայրենի բնաշխարհի ռեսուրսների եւ մյուս հարստությունների պահպանման ու խնայողաբար օգտագործման համար անհրաժեշտ է գիտականորեն հիմնավորված համալիր ծրագիր, որտեղ պետք է նշվի ինչպես այդ հարստությունների տեսակները ու չափերը , այնպես էլ դրանց օգտագործման կարգը:

Ազատության եւ անկախության ճանապարհով զարգացող Լեռնային Ղարաբաղի Հանրապետության (ԼՂՀ) համար արդի փուլում, մեր կարծիքով, վայրի բնաշխարհում ապրող կենդանիների եւ բույսերի տեսակային կազմի ու առանձնյակների քանակի, նրանց էկոլոգիական գոյապայմանների հետակոգնումը եւ հազվադեպ ու սակավաթիվ դարձած տեսակների պահպանությունը ունի արդիական նշանակություն, քանի որ դրանց հիման վրա պետք է մշակվի «Կարմիր գիրքը»:

ԼՂՀ տիպիկ լեռնային երկիր է, որն ընկած է հայկական բարձրավանդակի հյուսիսային եզրում, կազմելով փոքր Կովկասի հարավային մասը: Հյուսիսից եւ արեւմուտքից հանրապետության տարածքը երիզավորում են Մոռվի եւ Ղարաբաղի լեռնաշղթաները, որոնց լեռնաճյուղերը կազմում են հանրապետության տարածքի մեծ մասը: Նրանք տեղ-տեղ խախտվում են՝ առաջացնելով մեծ ու փոքր իջվածքներ, լանջեր, ձորեր ու կիրճեր: Լեռների ստորոտներից սկսվող թփերն ու անտառները իջնելով ցած՝ առաջացնում են դաշտեր ու մարգագետիններ: Անտառները են թփերը կազմում են երկրամասի տարածքի 32%-ը: Անտառներում գերակշռում են հաճարենիները եւ կաղնիները: Տեղ-տեղ լինում են մեծաթիվ վայրի տանձենիներ, խնձորենիներ, ընկուզենիներ, լորենիներ եւ հացիներ: Անտառների ստորին հարկում շատ տեղերում լինում են պտերներ, ազնվամորենիներ, մոշենիներ եւ բազմաթիվ այլ թփաբույսեր ու խոտաբույսեր: Անտառների եզրերին լայնորեն տարածված են տխլենիներ, սաղենիներ ու գեղենիներ: Արժե նաեւ նշել, որ հանրապետության ամբողջ տարածքում կենդանիների կողմից ուտվող բուսածածկում խիստ թունավոր, առավել եւս մահաբեր տեսակներ չեն արձանագրվել:

Հանրապետության բնաշխարհը հարուստ է մեծաթիվ լեռնային գուլալ աղբյուրներով, հանքային ջրերով եւ մի քանի փոքր գետերով (Թարթառ, Իշխանագետ, Խաչեն, Քոնդալան): Բացի դրանից, մերթին տասնամյակներին այստեղ կառուցել են նաեւ երկու ոչ մեծ ջրամբարներ (Սարսանգի եւ Խաչենի): ԼՂՀ-ում տեղումները մեծ մասամբ լինում են ձմռան եւ գարնան ամիսներին: Կլիման հանրապետության տարածքի մեծ մասում տաք է, չոր ձմեռով: Անտառները իրենց մերին եզրերում մինչեւ լեռներին անցնելը առաջացնում են ոչ մեծ սուբալպիական եւ ալպիական արոտավայրեր: Բուսական աշխարհը հարուստ ու բազմազան է նաեւ գյուղամերձ շրջաններում:

Վերը նշվածներից կարելի է եզրակացնել, որ հանրապետության բնաշխարհը նպաստավոր է կենդանաբանական բազմազանության, այդ թվում կաթնասունների գոյատեւման համար: Ընդ որում, անցյալ դարի սկզբներին բնաշխարհը դեռ պահպանում էր իր գրեթե կուսական տեսքը՝ անտառները խիտ էին ու մութ, բուսածածկը առատ ու բազմազան էր, անտառներում, լեռներում ու մարգագետիններում կային բազմաթանակ որսագազանների ու թռչունների (բծավոր նոջերում, ագնիվ նեղջերու, անդրկովկասյան վայրի ոչխար, վայրի խոզ, գորշ արջ, բեզոարյան այծ եւ այլն): Սակայն ֆաունայի եւ ֆլորայի այդ բազմազանությունն ու հարստությունը միայն բնական գործոններով չէր պայմանավորված: Դրանցում, անշուշտ, իր նշանակալից դերն է ունեցել նաեւ այստեղ ապրող մարդը՝ գյուղացին: Ճիշտ է, այդ շրջանում նա դեռեւս չուներ բնության հզոր տարերքների դեմ դիմակայելու զորեղ միջոցներ, սակայն նա անշեղորեն օգտագործում էր իր նախնիներից ստացած օգտակար փորձը. չէր խախտում գազանների ու թռչունների որսի ժամկետները, չէր հրդեհում դաշտերն ու անտառները, չէր իրականացնում անտառների համատարած հատում, լանջուղերը հեղեղումներից պաշտպանելու համար թփաբույսերից ու քարերից դարավանդներ էր պատրաստում եւ այլը:

ԼՂՀ-ում խորհրդային կարգերի հաստատելուց հետո (1921թ.) եւ կոլտնտեսային շինարարության ամբողջ ժամանակաշրջանում (1936թ. մինչեւ ԽՍՀՄ-ի փլուզվելը), երբ գյուղացին փաստորեն զրկվեց հողի սեփականությունից, երկրամասում սկիզբ առավ որսագողությունը եւ անտառների հատումները: Դրանք առավել մեծ թափ ստացան 1950 թվականից սկսած: Այս շրջանում Ղարաբաղում անտառահատումները իրականացվում էր Ադրբեջանի կառավարության հատուկ ծրագրով, հարեւան թուրքական շրջաններին

վաղելանյութ եւ շինանյութ մատակարարելու համար: Այս ամենի հետ կապված մեծ չափով աղքատացավ հայրենի բուսական եւ կենդանական աշխարհը, իսկ մի քանի կենդանատեսակներ անհետացան մշտապես: ԼՂՀ կենդանաֆաունան մեծ վնաս կրեց նաեւ արցախյան պատերազմից առաջ ԽՍՀՄ կառավարության կողմից երկրամասում սահմանված հատուկ կարգավիճակի եւ Ադրբեջանի կողմից սանձազերծված դաժան պատերազմի տարիներին, երբ երկրամասի պաշտպանական եւ ռազմական գործողությունների մեջ էին ընդգրկված գրեթե բոլոր դաշտերն ու անտառները:

ԼՂՀ կառավարությունը պատերազմից հետո հրադադարի այս 10 տարիներին որոշ անհրաժեշտ որոշումներ է ընդունել հայրենի ֆաունայի եւ ֆլորայի պահպանման ու խնայողաբար օգտագործման մասին, սակայն ափսոսանքով պետք է նշենք, որ այսօր էլ նկատվում են որսագողության եւ անտառային արժեքավոր բուսատեսակների ապօրինի հատման բազմաթիվ դեպքեր:

Անցնելով կաթնասունների արդի վիճակի համառոտ բնութագրությանը՝ հենց սկզբից նշենք, որ հայրենի ֆաունայի եւ ֆլորայի համակողմանի բնութագրության համար անհրաժեշտ են հետազոտություններ, քանի որ երկրամասի կաթնասունների ֆաունան մինչեւ հիմա, առավել եւս վերջին հինգ տասնամյակներին, ոչ ոքի կողմից համակողմանի չի ուսումնասիրվել, չնայած առանձին կենդանիների մասին եղել են մի քանի հաղորդումներ (1,2,3,4,5): Դրանց եւ մեր կողմից կատարված մոտավոր հաշվարկների համաձայն կարող ենք նշել, որ այստեղ այժմ ապրում են 200-ից ավելի տեսակի ողնաշարավոր կենդանիներ, որոնցից 75-ը կամ 37.5%-ը կազմում են կաթնասունները: Ընդ որում, կաթնասունների դասը այստեղ ներկայացված է գույց կձակավորների, գիշատիչների, նապաստականմանների, կրծողների, միջատակերների եւ ձեռաթեւավորների կարգերին պատկանող շուրջ ութ տասնյակ տեսակներով:

Զույգճոճակավորների կարգից այստեղ այժմ ապրում են 3 տեսակի կենդանիներ՝ ագնիվ եղջերուն, անդրկովկասյան մորուքավոր կամ բեզոարյան այծը եւ վայրի խոզը կամ եվրոպական վարազը: Անցյալ դարում այստեղ կենդանիների անկանոն որսի եւ որսագողության հետեւանքով այս խմբից անհետացել է 3 տեսակի կաթնասուններ՝ բծավոր եղջերուն, այծյամը եւ հայկական մուֆլոնը կամ անդրկովկասյան լեռնային ոչխարը: Ի դեպ, նշենք , որ վերջինս մինչեւ անցյալ դարի 60-ական թվականները դեռեւս հանդիպում էր Մոռավի առանձին բարձրություններում :

Հայտնի է, որ ագնիվ եղջերուն, բեզոարյան այծը եւ վայրի խոզը ունեն համեղ եւ դյուրամարս միս, որի համար էլ նրանց համարում են որպես արժեքավոր որսագազաններ: ԼՂՀ-ում բեզոարյան այծը ապրում է հանրապետության լեռնային շրջաններում, որտեղ բարձրությունը ծովի մակերեսույթից կազմում է շուրջ 2400-3700մ: Նրանք հաճախ շրջում են 5-10 առանձնյակներից կազմված խմբերով: Դրանց առանձնյակների մեծ մասը կազմում են էգերը եւ անչափահաս արուները: Աշնան եւ ձմռան ցուրտ եղանակներին նրանք իջնում են լեռնային համեմատաբար ոչ մեծ բարձրությունների շրջան: Ագնիվ եղջերուն ապրում է անտառների ոչ լեռնոտ շրջաններում: Դարնան վերջերին եւ ամռանը նա բարձրանում է մինչեւ սուբալպիական եւ ալպիական մարգագետինների շրջան: Արցախյան պատերազմի նախօրյակին, պատերազմի ժամանակ եւ հետպատերազմային ժամանակաշրջանի առաջին տարիներին այստեղ անվերահսկվող որսի եւ որսագողության հետեւանքով բեզոարյան այծի եւ ագնիվ եղջերուի թվակազմը աննախադեպ կրճատվել եւ հասել է կրիտիկական սահմանին (յուրաքանչյուր տեսակից մեր հաշվումներով մնացել են ոչ ավելի քան շուրջ 1000-ական առանձնյակներ): Ելնելով դրանից այս երկու տեսակը, մեր կարծիքով, պետք է մտցվեն հանրապետության կենդանիների պահպանության «Կարմիր գրքի» մեջ եւ հրատապ միջոցառումներ ձեռնարկվեն դրանց անհետացումը կանխելու համար:

Վայրի վարազը ապրում է գերազանցապես կաղնիներով, հաճարենիներով, վայրի տանձենիներով ու խնձորենիներով հարուստ անտառների շրջանում, որտեղ բարձրությունը ծովի մակերեսույթից կազմում է 1300-2200 մ եւ ավելին: Ցուրտ ձմռանը նա իջնում է մինչեւ գյուղատնտեսական անտառների շրջան, իսկ ամռան վերջերին եւ աշնան սկզբներին բարձրանում է մինչեւ սուբալպիական մարգագետինների շրջան: Կերի պակասի տարիներին ամռան եւ աշնան սկզբներին վայրի վարազը իջնում է մինչեւ գյուղամերձ կարտոֆիլի եւ եգիպտացորենի ցանքսերի շրջան ու նշանակալի վնաս է հասցնում այդ ցանքսերին: ԼՂՀ-ում վայրի խոզի գոյատեւման համար առայժմ վտանգ չկա, չնայած դրա որսի գործը եւս պետք է կարգավորվի:

Գիշատիչների կարգից երկրամասի ֆաունայում ապրում են 12 տեսակի կենդանիներ՝ մոխրագույն գայլը, ասիական չակալը, սովորական աղվեսը, գորշուկը, գորշ արջը, առաջաասիական ընձառույծը, աքիսը, հարավռուսական խայտաքիսը, անտառային քարակաքիսը, վայրի կամ կովկասյան անտառակատուն եւ ջրասամույրը: Ընդ որում, բացի առաջին չորսից (մոխրագույն գայլ, ասիական չակալ, սովորական աղվես, գորշուկ), մյուս ութ տեսակները իրենց առանձնյակների թվով դարձել են հազվադեպ հանդիպող, ուստի մեր

կարծիքով, դրանք բոլորն էլ պետք է գրանցվեն հանրապետության կենդանիների պահպանության «կարմիր գրքում»: Հարկ կա նաեւ նշելու, որ գիշատիչների կարգից անցյալ դարում հանրապետության ֆաունայից անհետացել են 4 տեսակի կենդանիներ՝ եղեգնակատուն, տափաստանային կատուն, լուսաբը եւ մանուլը: Դրանց անհետացման գլխավոր պատճառը հավանաբար դարձյալ հանդիսացել է նրանց անկանոն որսը: Եղեգնակատվի եւ տափաստանային կատվի անհետացման գործում որոշակի բացասական նշանակություն է ունեցել նաեւ ճահճուտների չորացումը եւ ազատ դաշտերի մշակաբույսերի տակ ցանքաշրջանառության տակ դնելը:

Նապաստականմանների կարգից ԼՂՀ ֆաունայում հանդիպում է միայն մեկ տեսակ՝ եվրոպական նապաստակը, որն ապրում է ինչպես հարթավայրային բաց տարածքներում, այնպես էլ անտառաթփուտային գոտում: Սուբալպիական եւ ալպիական մարգագետինների շրջան այս տեսակը բարձրանում է միայն ամռանը եւ աշնան սկզբներին: Արցախի շրջափակման ժամանակ (1988-1990թթ.), պատերազմի տարիներին (1991-1994թթ.) եւ հետպատերազմական ժամանակաշրջանի սկզբներին այս տեսակի առանձնյակների թիվը անկանոն որսի եւ ոչնչացողության հետեւանքով եւս նշանակալի կրճատվել է, ուստի եթե առաջիկայում չկարգավորվի դրա պահպանության եւ որսի գործը, ապա նրա գոյատեւումը եւս կարող է վտանգվել:

Կրծողների կարգը մինչեւ այժմ համակողմանի չի ուսումնասիրվել, սակայն վերջին տասնամյակներին մեր կատարած դիտարկումների համաձայն կարող ենք նշել, որ այստեղ ապրում են Հայաստանի հանրապետության տարածքում հանդիպող գրեթե բոլոր 27 տեսակները, (տնային մուկ, անտառային մուկ, դաշտամուկ, ավազամուկ, ջրամուկ, կուրամուկ, ճագարամուկ, մոխրագույն առնետ, սեւ առնետ, պարսկական սկյուռ, եվրոպական գետնասկյուռ, ճահճային կուղբ, փոքրասիական համստեր, մոխրագույն համստերներ, անտառային շեկ քնամոլներ եւ հնդկական վայրենակերպ), որոնց մեծ մասը գյուղատնտեսական մշակաբույսերի վնասատուներ եւ մարդկանց մի քանի ծանր մանրէային հիվանդությունների (տուլարեմիա, դոնոնախտ, ժանտախտ եւ այլն) կրողներ ու փոխանցողներ են:

Հնդկական վայրենակերպը հանրապետության տարածքում առաջին անգամ մենք հայտնաբերել եւ նկարագրել ենք 1981 թվականին (3), սակայն հետագա դիտարկումները ցույց են տվել, որ դրա առանձնյակների թիվը անկանոն որսի կապակցությամբ խիստ կրճատվել է, եւ այժմ նա դարձել է հազվադեպ հանդիպող, ուստի անհրաժեշտ է նրան, ինչպես նաեւ այստեղ հազվադեպ հանդիպող ճահճային կուղբին գրանցել ԼՂՀ «Կարմիր գրքում»:

Ձեռաթեւավորների կամ թռչող մկների կարգը այստեղ ներկայացրված է չորս 25-26 տեսակներով (մեծ պայտաքիթ, Մեհելի պայտաքիթ, փոքր պայտաքիթ, հարավային պայտաքիթ, սրակաչաջ գիշերաչղջիկ, շեկ գիշերաչղջիկ, լեռնային մաշկավոր, ականջավոր կամ երկարականջ չղջիկ, ծալքաշրթունք չղջիկ եւ այլն): Դրանք տարածված են հարթավայրային, նախալեռնային, միջին լեռնային եւ բարձր լեռնային շրջաններում, որտեղ բարձրությունը ծովի մակերեւույթից կազմում է չորս 550-2850մ եւ ավելին: Այստեղ նրանք ապրում են ծառերի փչակներում, շենքերի տանիքների տակ, քարանձավներում եւ բաց թողնված տարբեր շենքերում: Դրանց մի քանի տասնյակից մինչեւ մի քանի հազարի հասնող առանձնյակներ մենք հայտնաբերել ենք Ագռնիի, Շուշիի, Տումիի, Տոնաշենի, Վանքի, Քոլատակի եւ մի քանի այլ գյուղերի շրջակայքում գտնվող քարանձավներում: Բոլոր այդ տեսակները համարվում են օգտակար, քանի որ սնվում են գլխավորապես տարբեր վնասակար միջատներով եւ այլ անողնաշարավորներով: Փոքր պայտաքիթը եւ երկարականջ կամ ականջեղ չղջիկը մենք 1981թ. հայտնաբերել եւ նկարագրել ենք Ագռնիի քարանձավում (2), իսկ հետագայում նկատել ենք, որ դրանց քանակը տարեցտարի պակասում է: Վերջին տարիներին դրանց սակավաթիվ, կամ հազվադեպ դառնալու գլխավոր պատճառը մենք համարում ենք ապրիլ-մայիս ամիսներին այստեղ հաճախակի կազմակերպվող էքսկուրսիաները, որոնց ժամանակ բաց կրակը օգտագործվում է որպես լուսատու աղբյուր, որից էլ առաջանում է չափահաս առանձնյակների ու ձագերի մեծաթիվ մահացություններ: Դրանից խուսափելու համար մենք առաջարկել ենք ապրիլ-մայիս ամիսներին էքսկուրսանտների մուտքը քարանձավ խստիվ արգելել, իսկ մյուս ամիսներին դրանք կազմակերպել մասնագետի ուղեկցությամբ, որի ժամանակ բաց կրակը որպես լուսատու աղբյուր չպետք է օգտագործվի: Վերջիններիս մասին մենք առաջարկել ենք քարանձավի մուտքի մոտ հատուկ հուշագիր կպցնել:

Միջատակերների կարգից ԼՂՀ ֆաունայում, մեր հաշվումներով, այժմ ապրում են 7 տեսակներ՝ սովորական ոզնին, լայնականջ կամ ականջեղ ոզնին, սովորական գորշատամը կամ սրնչակը, փոքր գորշատամը կամ փոքր սրնչակը, ջրասրնչակը կամ կուտորան, սովորական խլուրդը, փոքրիկ կամ կույր խլուրդը: Դրանք ապրում են ծովի մակերեւույթից չորս 500-2200մ բարձրությունների վրա, սկսած հարթավայրային շրջանի բաց տարածքներից մինչեւ անտառային շրջաններն ընգրկող տարբեր կենսերկրացենոզներ: Առաջներում ականջեղ

(այնականոք, երկարականոք) ոգնին ավելի մեծ տարածում ուներ հանրապետության նախալեռնային գոտու խաղողենու այգիների շրջանում: Սակայն վերջին շուրջ 2 տասնամյակում այս տեսակի առանձնյակների թիվը այստեղ խիստ կրճատվել է, որը մենք կարծում ենք, կապված է գլխավորապես խաղողենու այգիների տարածքների կրճատման եւ դաշտերի հրդեհումների հետ: Ելնելով դրանից՝ այդ տեսակը մեր կարծիքով, եւս պետք է գրանցվի հանրապետության «Կարմիր գրքում»:

Ամփոփում

1. ԼՂՀ ֆաունայում այժմ ապրում են 75 տեսակի կաթնասուններ, որոնք կազմում են այժմ այստեղ ապրող ողնաշարավորների շուրջ 38%-ը:
2. Ամբողջությամբ վերցրած երկրամասի բնակլիմայական եւ էկոլոգիական պայմանները այժմ հիմնականում նպաստավոր են, ինչպես կաթնասունների, այնպես էլ մյուս ողնաշարավորների գոյատեւման եւ զարգացման համար:
3. Գլխավոր վտանգը որսագազանների եւ թռչունների պահպանության ու հարատեւման համար հանդիսանում է այստեղ շարունակվող որսագողությունը եւ անտառների հատումները:
4. Հանրապետությունում առաջիկայում պետք է խիստ ուժեղացվի ֆաունայի եւ ֆլորայի պահպանության գործը, դրան մասնակից դարձնելով հասարակական լայն մասսաներին, սկսած ընտանիքից եւ դպրոցից, վերջացրած ամենատարբեր հասարակական կազմակերպություններով: Այստեղ շատ կարեւոր ենք համարում կենդանիների եւ բույսերի պահպանության «Կարմիր գրքերի» մշակումը եւ գործածության մեջ դնելը, որոնցում պետք է գրանցվեն անհետացման եզրին կանգնած տեսակները (ազնիվ եղջերու, բեզոարյան այծ, անդրկովկասյան գորշ արջ,ականջեղ ոգնի,անդրկովկասյան անտառային կատու, հնդկական վայրենակերպ եւ այլն): Ժողովուրդը պետք է իմանա այդ տեսակների մասին եւ ակտիվ մասնակցի նրանց պահպանության գործին:

Резюме

1. В фауне НКР в настоящее время обитают 75 видов млекопитающих, которые составляют примерно 38% ныне здесь живущих видов позвоночных.
2. Природоклиматические и экологические факторы в настоящее время в основном благоприятствуют сохранению и развитию указанных выше всех видов млекопитающих и других позвоночных.
3. Основной вред фауне слагается из незаконной охоты на животных и неоправданной вырубки лесов.
4. В республике необходимо усилить меры борьбы по сохранению дикой фауны и флоры, вовлекая в нее широкие массы населения, начиная от семьи, школы и различных организаций. В сохранении редких видов фауны и флоры республики важную роль может играть "Красная книга" животных и растений, в которую должны внестись виды, находящиеся на грани исчезновения (благородный олень, безоаровый козел, закавказский бурый медведь, уж ушастый, кавказская лесная кошка, индийский дикобраз и др.).

Գրականություն

1. Ա.Բ. Աղասյան, Ս.Ա. Աղասյան, Ազոխի բարանձավի չղջիկները պաշտպանության կարիք են զգում, Հայաստանի բնություն, 1981, դ3, էջ 32-33:
2. Ա.Բ. Աղասյան, Ս.Ա. Աղասյան, Ասիական խոզուկը Արցախի ֆաունայում, Հայաստանի բնություն, 1981, դ3, էջ 34-36:
3. Հայկական սովետական հանրագիտարան, Եր., հատոր 4, 1978:
4. Красная книга Армянской ССР. Животные. (Под. отв. ред. член кор. АН Арм. ССР С.О. Мовсесян), Ереван, 1987.
5. Վ.Տ. Հայրապետյան, Ազոխի բարանձավի ֆաունան, ԱրՊՀ, գիտական տեղեկագիր, 1 (2002), էջ 150-155: